

«Բառացուցակ ակսանուանց ու դեղորէից յասկութեանց. Յրանսերէն է իհայ պատրաստեց դոկտ. Ն. Տաղաւարեան. Պօլիս, տպ. Մատթէոսեան, 1900 թ. գին. 5 զրշ.—

Յարգելի բժշկի, եթէ չեմ սխալում 13-րդ աշխատութիւնն է այս և ինչպէս մեղանում բժ. Արծրունին ու Բուդուղեանը, նոյնպէս և Պօլսում Տաղաւարեանը անխոնջ է իւր ճիւղում. Նորա «Գիտական Շարժ», «Ծագումն հայ տառից» (Իզմիրլ. միջանակի տրժանացած), «Մանրէաբանութիւն», «Տիեզերք», «Ծննդական գործարանք» և ին յաջողութեամբ տարածւում են։ —

Ներկայ աշխատութիւնը լոկ բառագիտական մի գըրքոյկ է, ուր բժշկութեան մէջ յայտնի ախտանունները և դեղօրայքը թարգմանել է պ. բժիշկը հայերէն ֆրանսերէնից։ Թարգմանութիւնը մեծ մասամբ յաջող է. արդէն յայտնի է մեր արևմտ. գրականագէտների նրբացած ճաշակը բառերի յաջող ընտրութեան և մանաւանդ դիպուկ թարգմանութեան—աւելի ճիշտ ստեղծագործութեան մէջ, թխելում։ Գրականութեան մէջ, եթէ քիչ թէ չատ յաջող կերպով եւրոպական հայացքած բառեր կան—տաճկահայոց գործն է։ Պ. Տաղաւարեանի բառերիցն են՝ խոյլախտութիւն (Adénopathie), կրծամղձուկ (Angine de poitrine), յողազոս (Ankylose), սրտխտ (Cardiopathie), դալուի (Chlorose), արբեմոյութիւն (Dipsomonie), վիրաջեմ (fièvre traumatique), մաղձաբար կամ լեղաբար (Zifhiase biliaire), որկոսասայ (gastrite), պղնձախտ (Maladie d'Addison):—

Ստեղծագործական չափազանցութիւններ են անշուշտ — Ողնուղասայ (Myélite), խելապասակասայ (Meningite), Հոյգուռ (Myxoedème) Շրջկուսաղեսայ, Հուգաթաղանթակեղ, Շագունակաղեղձասայ, Յօղաճնապարկասայ։ —

Ա. Մ.